

ԼՄԲԱՏԱՎԱՆՔԻ ՈՐՄՆԱԿԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԻ ՄԱՔՐՈՒՄ, ԱՄՐԱԿԱՅՈՒՄ ՈՒ ԿՈՆՍԵՐՎԱՏԻՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Է. դարում կառուցուած ու որմնանկարներով զարդարուած Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցին (Նկար 1) գտնւում է Հայաստանի Հանրապետութեան Շիրակի մարզի Արթիկ քաղաքից մօտ մէկ կմ հարաւ-արեւմուտք, սարալանջի գոգաւորութեան վրայ: Արձանագրութիւնների մէջ կոչում է Ս. Ստեփանոս կամ Սառնաղբիւրի Ս. Ստեփանոս եկեղեցի: Տեղի բնակիչները եկեղեցու վարդագոյն, կարմրագոյն տուֆի երանգից ելնելով, այն քնքչօրէն անուանում են «Կարմիր վանք»: Յիշատակութիւն չի պահպանուել հիմնադրման կամ կառուցողի մասին: Լմբատավանքի ամենահին արձանագրութիւնը ԺԱ. դարի առաջին կէսին է վերագրուում: Դրանում նշում է, որ ոմն կարապետ իր միջոցներով ջուր է բերել վանք: Հաւանաբար, վանքը հէնց այդ ժամանակից էլ սկսում է կոչուել նաեւ Սառնաղբիւրի Ս. Ստեփանոս: Լմբատավանքը յետագյում կամսարականներից անցել է Պահլաւունիներին: Ցետոյ այն նուաճել են սէլջուկները: իսկ 1191 թուականի մի որմնագրութիւնից իմանում ենք, որ Տէր Բարսեղը վերագրերել է վանքին պատկանող ջուրը եւ նուիրել Ցիցք գիւղը: Այնուհետեւ Շիրակ գաւառի հետ այս վանքը եւս անցնում է Զաքարեաններին: Մէկ այլ արձանագրութիւն յիշատակում է, որ Գրիգորը եւ իր եղբայր՝ Մովսէսը Ս. Ստեփանոսին են նուիրում Սառնաղբիւր գիւղը, որի դիմաց վանքի միաբանութիւնը խոստանամ է նրանց յիշատակին ամենամեայ պատարագ մատուցել:

1251 թուականին մի իշխան իր սեփական հնձանը վաճառում է վանքին: Այս արձանագրութիւնը վկայում է այն փաստը, որ Լմբատավանքն այդ ժամանակ հարուստ ու կանգուն էր: Եկեղեցու ճարտարապետական յօրինուածքը, զարդանախչերը, որմ նանկարները հիմք են տալիս վստահութեամբ ասել, որ ի. դարի՝ Շիրակի տէրերի՝ կամսարականների ժամանակաշրջանի կառոյց է:



Նկար 1. Լմբատավանքի Ս. Ստեփանոս նախավիկայ եկեղեցու տեսքը հիւսիս-արևելյան վեցական առանձինությամբ:

Եկեղեցին ամբողջութեամբ կառուցուած է մուգ մանուշակագոյն սրբատաշ տուֆով, կրաչաղախով, տանիքը նախկինում ծածկուած է եղել կղմինդրով, իսկ յետագայ վերանորոգումների ժամանակ փոխարինուել է սալաքարերով։ Եկեղեցին 1926ի երկրաշարժից տուժել է իսկ 1988ի երկրաշարժը եղել է 7 բալանոց, չէնքը քիչ է վնասուել, պատերին փոքր ճեղքեր ունի, գմբէթը լաւ է պահպանուել։ Ամենայն հաւանականութեամբ քսաներորդ դարի վաթսունական թուականներին, եկեղեցու ներսում իրականացուել են որմնանկարների մասնակի վերականգնման աշխատանքներ։ Արթիկի մօտակայքի հին բնակատեղիներից մէկը սարահարթի վրայ Լմբատավանքի արեւմտեան կողմում է։ Հաւանաբար դա Հայրենեաց թաղքն է, որ Գրիգոր արքեպիսկոպոս Պահլաւունին ԺԲ. դարի վերջերին նուիրել է Լմբատավանքին։ 1953ին Յուշարձանների պահպանման ու վերականգնման վարչութիւնը վերականգնել է միայն գմբէթի մասամբ վթարուած տանիքը, խաչաթեւերի աւերուած ծածկերը, քիւերը եւ թմբուկի արեւմտեան ճակատի լուսամուտը (Նկար 2)։ Վերականգնման աշ-

խատանքների ընթացքում պարզուել է, որ յուշարձանը նորոգուել է նաեւ ԺԲ.-ԺԳ. դարերում։ Վերականգնուել է նաեւ 1989ին։ 2009-2010 թուականներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի որոշման համաձայն, Լմբատավանքը վերաօծուել է ու իր դռներն է բացել հաւատացեալների համար։ Այսօր եկեղեցին ունի իր վանահայրը, որ կանոնաւոր պատարագներ է մատուցում հաւատացեալների համար։



Նկար 2. Փասներորդ դարի յիսունական թուականների վերանորոգումները։

Կամաւոր սկզբունքով, տեղի բնակիչներն ու հաւատացեալները, ներսի մաքրման աշխատանքների ժամանակ, քանդել հեռացրել են ի. դարի սուաղի մնացորդները՝ դրանով խիստ վնասելով ներքին յարդարման բնօրինակ յօրինուածքը (Նկար 3)։ 2012 թուականին մեր կողմից Լմբատավանքի եկեղեցին այցելելու ու ներքին որմնանկարների պահպանման իրավիճակը փաստագրելուց յետոյ, որոշում կայացուեց դրանք մաքրել, ամրակայել ու վերականգնել անձնական միջոցներով։ 2014 թուականին տեղացի բարերար Աղասի Աղաջանեանի հովանաւորութեան չնորհիւ, իրականացուել են տարիներ շարունակ մոմավառութեան պատճառով ներքին պատերի, սուաղի վրայ հաւաքուած մրի, ծխի, պառափինի մաքրում, հեռացում, պատերի ամրակայում։ Եկեղեցու ներսի պատերի որմնանկարների մասնակի վերականգնման ինչպէս նաեւ պատերի ու սուաղի մաքրման աշխա-

տանքները կը շարուակուեն 2015 թուականին: Իրականացուած եւ իրականացուելիք բոլոր աշխատանքները ներկայացուել են 2014 թուականի ՀՀ Մշակոյթի նախարարութեան կողմից կանչուած գիտամեթոդական խորհրդում ու հաւանութեան արժանացել (Նկար 4):



Նկար 3. Սուաղի հեռացումը մաքրման նպատակով:

Տաճարի շուրջ տարածուող վանապատկան փոքրիկ գերեզմանոցի բոլոր շիրմաքարերը կարմրագոյն են, իրենց դարաշրջանին համապատասխան մշակուած ձեւրով: Մարահարթի որոշ գերեզմանների սարկոֆակները քարից են: Շրջակայ տարածքում պահպանուել են նախքրիստոնէական հնութիւններ:



Նկար 4. ՀՀ Մշակոյթի նախարարութեան գիտամեթոդական խորհրդի նիստը:




Նկար 5. Եկեղեցու արեւմտեան ճակատը:



Նկար 6. Հիւսիսակողմ ուղղանկիւն խորանի փոխանցումը գմբէքարդի:



Նկար 7. Եկեղեցու արեւմտեան լուսամուտի արձանագրութիւնը:



Նկար 8. Յետագյում բացուած արեւմտեան ճակատի լուսամուտը դրսից:

Եկեղեցին միախորան, արտաքուստ խաչաթեւ, կենտրոնագմբէթ կառոյց է՝ գմբէթարդային ծածկերով։ Գմբէթի թմբուկը ուժակող է, սրածայր վեղարով։ Մուտքը արեւմտեան կողմից է, առանցքից շեղուած դէպի արեւմուտք (Նկար 5)։ Եօթ երկար, նեղ, կամարակապ ու զարդապատ լուսամուտ ունի։ Զորս լուսամուտ բացուած է գմբէթի թմբուկի մէջ, մէկական՝ միւս կողմերից։ Հայկական ճարտարապետութեան միախորան յօրինուածքներում ուղղանկիւն խաչաթեւերը աւարտուած են գլանաձեւ թաղերով։ Այս առումով Լմբատավանքը բացառութիւն է կազմուած։ Նրա հիւսիսային եւ հարաւային ուղղանկիւն խաչաթեւերը պսակուած են գմբէթարդներով (Նկար 6)։ Անցուած ուղղանկիւն հիմ-

քից գմբէթարդ իրականացուած է միմեանց յաջորդող եռաշար տրոմպներով որոնք կազմում են առաջին շարքը, ուղղանկիւն հիմքը դարձնելով քառանիստ: Երկրորդ շարքը կազմում են արդէն եռանիստ հիմքի անկիւններում տեղադրուած զոյգ տրոմպները, իսկ երրորդը՝ վերջիններիս կենտրոնում զետեղուած փոքր տրոմպը: Լմբատավանքի եկեղեցին ժամանակակից նմանատիպ կառոյցների շարքում մեզ է հասել բաւական լաւ վիճակում: Դարերի ընթացքում իրականացուած բազմաթիւ վերանորոգութիւնների եւ յարակից կառոյցների առկայութեամբ հանդերձ յուշարձանի ճարտարապետական նախնական յօրինուածքը անխաթար է մնացել: Արեւելք-արեւմուտք առանցքով, յետագայում կառուցուել են յաւելեալ սենեակներ: Վերջիններս յուշարձանի նախնական յօրինուածքի մէջ չեն մտել: Ուսումնասիրութիւններից պարզ է դառնում, որ վերականգնուել են նաեւ խաչաթեւ տանիքները ու գմբէթը: Վերջինիս վերակառուցման մասին վկայում է արեւմտեան լուսամուտի վերին հատուածի ԺԳ. դարի արձանագրութիւնը՝ «Չինեցաք զգմբէք եկեղեցու» (Նկար 7): Լմբատավանքի եկեղեցին ունի նաեւ մէկ այլ իւրայատկութիւն: Գլխաւոր խորանը ի սկզբանէ լուսամուտ չի ունեցել եւ դրսից քանդակուած է եղել հաւասարաթեւ խաչ (Նկար 8): Ըստ Վահագն Գրիգորեանի, այս հանգամանքը թոյլ է տալիս ենթադրել, որ Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին կառուցուել է Զ. դարում:



Նկար 9. Որմնանկարի արխիւային լուսանկարի:

Եկեղեցու ներսում պահպանուել է գլխաւոր խորանի եւ հիւսիսային ու հարաւային խորանների արեւելակողմ պատերին զետեղուած ու միանգամայն խաւարուած վճակում մեզ հասած, շինութեան կառուցման ժամանակակից, հրաշալի որմնանկարներ: Մեր կողմից կատարուած արխիւային ուսումնասիրութիւնները ոչ մի կարեւոր տեղեկութիւն չեն տուել որմնանկարների նախնական պահպանուածութեան կամ դըրանց վերանորոգումների մա-

¹ Հայաստանի վաղ միջնադարեամ կենտրոնագմբէք փոքր յուշարձանները, Երևան 1982:

սին: Գտել ենք միայն որմնանկարի արխիւային մէկ լուսանկար, թուագրուած 1910ին, Եօդէֆ Ստրժիկովսկու գրքում (Նկար 9):²



Նկար 10. Գլխաւոր խորանի որմնանկարի պատկերագրութիւնը մաֆրենուց յետոյ։



Նկար 11. Ս. Գեորգ զօրավար պատկերագրութիւնը մաֆրենուց առաջ։



Նկար 12. Ս. Սարգիս զօրավար պատկերագրութիւնը մաֆրենուց առաջ։

² Strzygowski, J., *Die Baukunst der Armenier und Europa*, Wien 1918.

Գլխաւոր խորանի գմբէթարդի կենտրոնում պատկերուած է գահակալ Քրիստոսը, շուրջը՝ երկնային ուժերի խորհրդապատկերներ, բոցի լեզուների ֆօնի վրայ, (Նկար 10): Զախ եւ աջ պատերին պատկերուած են դէպի խորանի կենտրոնը շարժուող երկու սուրբ գօրավար ձիաւորներ՝ Ս. Գէորգ (Նկար 11) եւ Ս. Սարգիս (Նկար 12), երկուսն էլ ձեռքերին խաչավարդ ցուպով: Որմնանկարները հարթապատկերային են, տեղ-տեղ գրաֆիկական մօտեցումով, կատարուած են հիւթեղ, մեծ ներդաշնակութեամբ: Խորանի գմբէթարդի կենտրոնական մասում գետեղուած Քրիստոսի գլուխը գրեթէ չի երեւում: Բաւական լաւ պահպանուել է գահին նստած մարմինը: Լմբատավանքի որմնանկարների գլխաւոր խումբը որ գետեղուած է գլխաւոր խորանի գլանաձեւ պատին՝ յետազայում բացուած պատուհանի վերին շրջադին յարակից գտնուում է նրանից 145սմ ներքեւ, այժմեայ վերականգնուած բեմի մակերեսից 457սմ բարձրութեան վրայ: Կիսաշրջանագծի հորիզոնական երկարութիւնը կազմում է 502սմ (Նկար 13):



Նկար 13. Գլխաւոր խորանի որմնանկարը մաքրելուց առաջ:

Խորանի ուղղահայեաց, գլանաձեւ, ներքին պատը հպւում է գմբէթարդի մէկ չորրորդ երկոր մակերեսին պայտաձեւ անցումով, որի հետեւանքով, գահին նստած եւ շատ վատ պահպա-

նուած Քրիստոսի մարմնի մի հատուածը եւ գլուխը, սահուն անցումից զուրկ են, (Նկար 14): Այս հատուածում, պատին ծեփուած եւ որմնանկարի հիմք հանդիսացող սուաղի պահպանուած շերտը խորանի ամբողջ տրամաչափով քիչ ներս է մնում: Գմբէթարդների նմանատիպ պայտաձեւ փոխանցումները շատ բնորոշ են Զ.-է. դարերի հայկական եկեղեցիներում: Գլխաւոր խորանի որմնանկարում յատկապէս լաւ են պահպանուած քառակերպերի պատկերները (Նկար 15): Նրանց չորս ճերմակ թեւերը ծածկուած են բաց աչքերով, իսկ մարդկային դէմքերն օժտուած են խոր արտայայտչականութեամբ:



Նկար 14. Գլխաւոր խորանի ուղղահայեաց՝ գլանածեւ եւ գմբէթարդային՝ պայտածեւ երկրաչափական ծաւալների սնամեց հատուածը մաքրելուց առաջ:



Նկար 15. Քառակերպը պատկերագրող որմնանկարի մանրամասն մաքրելուց առաջ:

Որմնանկարների հատուածները պահպանուել են բաւական վատթար վիճակում: Դրանք գտնուում են գլխաւոր խորանի գմբէթարդի ստորին հատուածում եւ հիւսիսային ու հարաւային գմբէթարդների վերին հատուածներում: Որմնանկարները իրականացուել են պատին ամրացուած սուաղի շերտի վրայ: Որմնանկարի հատուածները ծածկուած են կեղտի, փոշու եւ հիմնականուած մոմի մրով, որի պատճառով պատկերագրային տեսարանները աղօտ են (Նկար 16): Գունաշերտի որոշ հատուածներ պոկուել ու թափուել են տեղի տալով պատի սուաղի հիմքի առաջ գալուն: Սուաղի պահպանուած հատուածների եզրերը վաթսունականներին ամրացուել են շաղախով: Սուաղի շերտը տեղ տեղ ուռչել ու պոկուել է քարի երեսպատի հիմքից: Որմնանկարներից գեղծ պահպանուած սուաղի շերտն ամբողջովին սեւացած է (Նկար 17):

Նոյն վիճակում են նաեւ առանց սուաղի մնացած պատի տուֆէ քարերի մեծամասնութիւնը։ Ներքին պատերի վրայ տեղում մեր կողմից կատարած ուսումնասիրութիւնները, ի յայտ են բերել 2010ական թուականներին կատարուած վայրագ վերանորոգութեան հետքեր, որոնք պարզ նկատում են հիւսիսային եւ հարաւային գմբէթարդների վրայ։ Մաքրման նպատակով, ասեղներով ծածկուած, այդ նպատակով յատուկ պատրաստուած մուրճերի օգնութեամբ, պատերի վրայից քանդուել հեռացուել է պատմական սուաղը։ Այս հատուածներում տուֆէ պատերը ճերմակ են, առանց սուաղի (Նկար 18)։ Քանզի սուաղի բեկորները քանդելուց յետոյ թափել են, դժուար է ասել, եթէ դրանց վրայ գոյութիւն են ունեցել է։ դարի որմնանկարի հատուածներ։



Նկար 16. Որմնանկարի տեսքը նախքան մաքրումը։



Նկար 17. Գունային յարդարանից գերծ պատերի սեւացած հատուածը մաքրելուց առաջ։



Նկար 18. Պատմական սուաղի բանդման հետեւանելով առաջացած պատի սպիտակ հատուածները։

Հայկական որմանկարչութեան վերաբերեալ մեզանում մինչօրս կատարուած ուսումնասիրութիւնները սակաւ են ու թերի: Գրականութեան մէջ չենք գտել Լմբատավանքի որմանկարների մասին արժէքաւոր տեղեկութիւններ եւ այս յանդամնքից ելնելով, կարեւոր համարելով Լիդիայ Ալեքսանդրովնայ Դուռնովոյի աշխատութիւնը հայկական որմանկարների մասին, նպատակայրմար ենք գտել մէջբերել իր ուսումնասիրութիւնը Լմբատավանքի որմանկարի պատկերագրութեան մասին:

“Особенно выразительна роспись начала 7-го века в Лмбате, где сохранилась в основном нижняя часть композиции: полукуружие радужной мандорлы, внутри которой видна часть трона и подножье, украшенное самоцветами и жемчугом, а также одно колено ноги Христа. Мандорла флангируется двумя тетраморфами. И четыре белых крыла усеяны глазами, а рядом с ногами тетраморфов помещены небесные силы – “троны” – огненные колеса. С обоих сторон этой сцены, у самого края абсиды в Лмбате изображены два зеленых шестикрыла, над ними на капительях, выходящих углом на восточную стену, – типичный для 7-го века орнамент из лотосовидных пальминок. Безусловно, это сохранившаяся часть композиции “Христос в славе”, вся она расположена на фоне языков пламени, как это описано в видении порока Иезикилия. Исключительная выразительность лиц обоих тетраморфов, роднящая их с архангелами одновременно византийской мозаики в Никее, звучное сочетание в основном трех чистых тонов (различных оттенков красного, ярко-зеленого и белого), уверенный, свободный от трафарета живописный прием исполнения ставят этот памятник в первые ряды произведений раннехрестянской стенной живописи.

На восточной стене храма в Лмбате рядом с апсидой находится значительно хуже сохранившиеся всадник: с севера на белом коне, вероятно, св. Саркис, с юга-св. Георгий на вороном коне. Поворот торса и лиц воинов, короткие копья-жезлы с крестом на конце в их руках, развевающиеся за спиной плащи, поворот голов коней, отсутствие изображения злых сил под их ногами, пишные хвосты, высокий подъем шеи и торжественно-тяжелая поступь этих всадников с циклом так же святых-воинов в росписях копского монастыря Бауит в Египте. Ниже конхи, по всей вероятности, были расположены двенадцать апостолов и Богоматерь, что установило бы наличие композиции “Вознесения” ико-

нографически объединяющей иллюстрирование исторического по Евангелию изложенного события с библейским видением Иезекииля”³.

Լըբատավանքի Ս. Ստեփանոս նախավկայ եկեղեցու որմնանկարների մաքրման, ամրակայման ու պահպանողական վերականգնման աշխատանքները սկսելուց առաջ, 2012 թուականին, եկեղեցու հարաւային խորանից վերցուել է սուաղի եւ գունային պիգմենտների փոքր նմուշներ, որոնք ուղարկուել են Վիչենցիայի «Palladio» լաբորատոր անալիզների միջազգային մասնագիտացուածուական կենտրոն։ Լաբորատոր փորձարկումների արդիւնքների եզրակացութիւնը հետեւեալն է։

Պետրոգրաֆիկ անալիզի վերլուծութիւնը թոյլ է տալիս փաստել, որ մէկ հարիւրերորդամետր նմուշը, բաղկացած է կաւճի հիմքի վրայ ագուցուած կաւճ (selenite) եւ անթափանց մինեռալի համախառնութից։ Նիւթը ցածր ծակոտկենութիւն ունի եւ հաշուի առնելով նաեւ նրա լաւ ամրութիւնը, որ ուսումնասիրուել է խոշորացոյցի միջոցով, մեզ թոյլ է տալիս եզրակացնել փոքր նմուշի լաւ պահպանման վիճակը։ Միկրոշերտագրական անալիզը ի յայտ է բերում այն փաստը, համաձայն որի, կրային շերտի վրայ գոյութիւն ունի կրէ եւս մէկ սեւ շերտ, որի հաստութիւնը 8-30 մմ։ Այն պարունակում է սիլիկատներ եւ ածխային մասնիկներ (որոնք բնորոշ են սեւ մըին)։ Թէ հիմքի եւ թէ մակերեսային շերտերը պարունակում են կալցիումի օքսալատ։ Ամենայն հաւանականութեամբ, օքսալատը առաջացել է օրգանական համաձուլուածքի ձեւափոխութիւնից, յաճախ սպիտակուցային բնոյթի, որ աւելացւում է կրէ շաղախին, բարելաւելով նրա մածուծիկութիւնը եւ նպաստելով շաղախի ջրակայունութեանը խոնաւ միջավայրերում։ Մակերեսային սեւ շերտը, իրենից ներկայացնում է ժամանակի ընթացքում խիստ քայլայուած նկարչական շերտ կամ հերթական մաքրման աշխատանքների ընթացքում օգտագործուած քլորի լուծոյթի առկայութեան հետեւանք ինչպէս նաեւ, պաշտպանիչ շերտի նպատակով անորոշ նիւթի օգտագործում, որի վրայ պահպանուել են փոշու բազմաթիւ մասնիկներ», (Վիչենցա, Սեպտեմբերի 13, 2012, Palladio լաբորատորիայի վարիչ՝ Դոկտ. Էլենա Մօննի, Լաբորատորիայի պատասխանատու՝ Դոկտ. Պաոլոյ Կոռնալէ)։

³ Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва 1979.

Որմնանկարների շարքը, որ գտնւում է մայր խորանի վերին մասում եւ գմբէթարդի մակերեսին, վատ է ընթերցւում։ Փոշու խտացուած չերտը պատել է նկարազարդ ողջ մակերեսը մասնաւորապէս գմբէթարդի պայտաձեւ հատուածը։



Նկար 19. Քառակերպը պատկերագրող որմնանկարի
թեւերի հատուածը մաքրելուց յետոյ։

Որմնանկարի թեմատիկան ներշնչուած է եզեկիէլ մարգարէի տեսիլքից համաձայն որի, կոմպոզիցիայի կենտրոնական մասում Քրիստոսի պատկերն է գահին նստած, որի երկու կողմերին քառակերպի (տետրամորֆի) պատկերներն են, որոնց թեւերը զարդարուած են բազմաթիւ բաց աչքերով (Նկար 19), իսկ ստորին հատուածում՝ ըրի մէջ անիւներ են զետեղուած (Նկար 20)։ Քառակերպի կենտրոնում թեւաւոր քերովբէի գլուխն է,

նրա աջ կողմում՝ առիւծի գլուխը, վերին մասում՝ արծուի գլուխը, իսկ ձախ կողմում ցլի գլուխը (Նկար 21):



Նկար 20. Հրէ աճիւմերը
պատկերագրող որմնանկարի
հատուածը մաքրելուց յետոյն:



Նկար 21. Կենդանակերպ
գլուխները պատկերող որմնանկարի մաքրամասն աշխատանքի դիրքը:

Բոլոր այս պատկերները ներկայացնում են Եզեկիել մարդարէի տեսիլքի դասական արտայայտչակերպը: Հակուած ենք մտածել, որ Եկեղեցու կառուցման ժամանակաշրջանը, Ա. Ստեփանոս Նախավկային ձօնելու իրողութիւնը, Եկեղեցու ներսի պատերի որմնանկարների թեմատիկան, Եզեկիել Մարգարէի հանդիսաւոր Աստուածայայտնութեան հայկական տարբերակի ընտրութիւնը, Խիզախ զօրավար սուրբեր՝ Ա. Գեւորգի ու Ա. Սարգսի ձիաւոր կերպարները, Նկարչական ձեւակերտումն ու գեղագիտական ճաշակը, գեղարուեստական նրբներանգները, գունային համադրութիւնները, որմնանկարի կատարման տեխնիկան եւ որ ամէնից կարեւորն է ներքին ու արտաքին ճարտարապետաշինարարական հնարքների ընտրութիւնները, պատահական լինել չէին կարող: Եկեղեցին ձօնուած է Ա. Ստեփանոս Նախավկային, որը Քրիստոսի սիրոյ վարդապետութեան համար նահատակուած առաջին մարտիրոսն էր: Հստ Ա. Գրիգոր Տաթեւացու՝ նա գնում է Պետրոս եւ Յովհաննէս Առաքեալների մօտ մկրտուելու: Մկրտութեան պահին ջրի վրայ երեւում է լուսապսակ: Այդ զարմանահրաշ դէպքից յետոյ նրան անուանում են «Ստեփանոս», որ նշանակում է պսակաւոր: Ա. Ստեփանոսն Աստծուց տրուած չնորհներով եւ զօրութեամբ զանազան հրաշքներ է գործել: Միւս կերպարը՝ Ա. Գեւորգ զօրավարը, պատմական տեղեկութիւնների համաձայն, Կապադովկացի բարեպաշտ քրիստոնեայ ընտանիքի

զաւակ էր: Զինուորագրուելով հռոմէական բանակին՝ իր ցուցաբերած քաջութեան եւ հաւատարմութեան շնորհիւ կարճ ժամանակամիջոցում է հազարապետութեան պատուին: Կայսեր հրաւիրած խորհրդակցութեան ժամանակ ընդդիմացել է քրիստոնեաներին հալածելու նրա ծրագրին՝ բացայացելով իր քրիստոնեայ լինելը: Կայսրը, զարմացած ու ապշած տեղի ունեցածից, բանտարկել է սրբին՝ ենթարկելով անլուր չարչարանքների: Ս. Գեւորգի քարոզների շնորհիւ շատերը դարձի են եկել, որոնց թւում էր նաեւ Ալեքսանդրա թագուհին: Մեկենասի կողմից նախընտրած վերջին կերպարը Ս. Սարգիսն է, որը պատմական տեղեկութիւնների համաձայն, Յուլիանոս Ուրացողի թագաւորութեան օրօք, (360-363 թթ.) երբ սկսում են Քրիստոսի եկեղեցու հալածանքները, աստուածային յայտնութեամբ, հրաման առնելով հեռանում է կայսրութեան սահմաններից, իր որդի Մարտիրոսի հետ գալիս, ապաստանում է քրիստոնեայ Հայաստանում, ուր թագաւորում էր Տիրան արքան՝ Մեծն Տրդատի թոռը՝ Խոսրովի որդին: Տեղեկանալով, որ Յուլիանոսը մեծ զօրքով շարժւում է Պարսկաստանի վրայ՝ Հայոց արքան, ձգտելով իր երկիրը գերծ պահել յարձակման վտանգից, յորդորում է Ս. Սարգսին ծառայութեան անցնել Շապուհի մօտ: Շապուհը սիրով ընդունում է Ս. Սարգսին եւ նշանակում նրան զօրագնդերի հրամանատար: Զօրականներից շատերը, տեսնելով փայլուն զօրավարի բարեպաշտութիւնն ու փարքով վկայած նուիրումն առ Աստուած, իր աղօթքներով Տիրոջ գործած հրաշքները, հրաժարւում էին հեթանոսութիւնից եւ դառնում քրիստոնեայ: Ս. Սարգիսը հայաստանում ամենասիրուած սրբերից է եւ պատահական չէ, որ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մասունքները բերել է կարբի (Աշտարակի շրջան) տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Ժամանակաշրջանի ու տարբեր պատմական իրադարձութիւնների ներքոյ, Լմբատավանքի Ս. Ստեփանոս Նախավկայեկեղեցու որմնանկարները դառնում են ոչ միայն գեղարուեստական ու նկարչական գլուխգործոց, այլ արտայատում, պահպան ու հաղորդում են ամփոփ ժամանակահատուածի որմնանկարչական հմտութիւնը, որը ցաւօք գոյատեւում է մինչեւ Հ. Կարչական հմտութիւնը, որը ցաւօք գոյատեւում է մինչեւ Հ. Դարը, երբ արաբական արշաւանքները աղէտալի իրավիճակ են ստեղծում Հայաստանում՝ առիթ դառնալով Հայոց եկեղեցու միքանի դար տեւած ամլութեան: Այս հանդամանքից ելնելով, որմանանկարչութիւն եւ ընդհանրապէս արուեստի ու ճարտարապե-

տութեան բնական զարգացումն ու կատարելագործումը ընդհատում են մինչեւ Ժ. դարի նոր վերելքը: Հէնց այս իմաստով, Լմբատավանքի որմնանկարները բացառիկ նշանակութիւն են ստանում քանզի բացակայում են այս շրջանին վերագրուղ եւ բարուղ պահպանուած այլ բաղդատական օրինակներ:

Իմի բերելով վերը ասուածը, կարող ենք եզրակացնել հետեւեալը: Լմբատավանք եկեղեցական կառոյցը Քրիստոսի առաջին Նախավկայ մարտիրոս սրբին ձօնելու ընտրութիւնը, որմնանկարի գլխաւոր թեման՝ Եգեկիել Մարգարէի Քրիստոսի հանդիսաւոր Աստուածայայտնութիւնը որպէս Տիրոջ փառքի ամենահին տեսիլքը, քաջարի զօրավարներ ու քրիստոնէութեան նահատակներ՝ Ս. Գեւորգի ու Ս. Մարգսի պատկերագրութիւնների առկայութիւնը վկայում են հայոց եկեղեցու՝ Ե. դարում հայրապետի, ճարտարապետ շինարարի, քանդակագործ վարպետի, քարտաշ ստեղծագործողի ու արուեստագէտ որմնանկարչի ճշգրիտ այն միասնական ու համագործակցական մտայնութիւնը, համաձայն որի, առաջնայինը՝ քրիստոնէութեան ամենահին, անաղարտ, համընդհանուր ու աշխարհասփիւռ նախագաղափարների փառաբանումն էր:



Նկար 22. Որմնանկարի վրայ վանդալների բռնած գրագրութիւնները:



Նկար 23. Գլխաւոր խորանի հարաւակողմ խոյակը պատկերագրող որմնանկարը մաքրելուց յետոյ:

Երկու ձիաւոր սրբերի որմնանկարները՝ գլխաւոր խորանի հիւսիսային կողմում՝ Ս. Գեւորգը սեւ ձիու վրայ եւ Ս. Մարգիսը կարմիր ձիու վրայ գլխաւոր խորանի հարաւակողմում, պահպանուել են շատ վատ վիճակում: Որմնանկարի մակերեսը ամբողջովին ծածկուած է փոշու հաստ շերտով, որը թանձրացել է հաւատացեալների կողմից անընհատ վառուղ մոմերի ծխից առաջացած մըից: Բոլոր պատկերները շատ վատ են ընթերցւում:

Վերջիններիս ստորին հատուածի տուֆէ պատի վրայ ներկայ է մոմի մածուկի սեւացած հաստ ու կոշտ շերտ:



Նկար 24. Կարմիր ներկով արուած նշանները բարերի շովերի վրայ:



Նկար 25. Նախինում արուած վերանորոգումները:



Նկար 26. Սուաղի անցկացման մանրամասն:



Նկար 27. Թանձր վրանահարուած-նորով իրականացուած հատուածը:

Բազմաթիւ են նաեւ պատերի ու սուաղի վրայ տարբեր ժամանակներում թողնուած անյարիր գրութիւնները, որոնք խաթարում են որմնանկարների յստակ ընթերցումը (Նկար 22): Սուաղի շերտի հաստութիւնը մօտ հինգ միլիմետր է, այն բաղկացած է կաւճէ կապակցող չաղախից, դիպսի բիւրեղահիդրատից (աէլենիտ) եւ պղտոր միներալներից: Սուաղի շերտը իրականացուած է մեծ խնամքով՝ ու լաւ հարթ է: Որմնանկարի վրայ նկատուում են կցոններ ու յաւելումներ: Ամենայն հաւանականութեամբ սրանք տարբեր օրերում իրականացուած աշխատանքի արդիւնք են (օրինակի համար գլխաւոր խորանի հարաւակողմ խոյակի վրայ, Նկար 23): Որոշ հատուածներում սուաղի շերտը պոկուել է քարի պատից ուստի անհրաժեշտ է իրականացնել նեպարկումներ դրանք ամրացնելու համար: Պատերի որոշ հատուած-

ներում, եւ դրանք սակաւ չեն, սուաղը չի պահպանուել (մասնառապէս գմբէթարդի վերին հատուածում), այստեղ, տուֆի քարերի խընամքով իրականացուած շարուածքը լաւ տեսանելի է: Կարեւոր ենք համարում նշել, որ այս հատուածներում քարերի շովերի սուաղի վրայ լաւ պահպանուել են կարմիր ներկով արուած նշաններ (Նկար 24): Խորանի գմբէթարդի հիւսիսակողմորոշ հատուածներում երեւում են սպիտակ աղային նստուածքներ: Վերջիններս գոյացել են անձրեւածրերի ներխուժման հետեւանքով երբ տանիքը դեռ նորոգուած չէր: Գմբէթարդի վերին հատուածների որոշ հատուածներ ամբողջովին սեւացած են մոմերի այրուելու հետեւանքով առաջացած մրից: Սուաղի որոշ պարապ հատուածներ ժամանակին վերանորոգուել են դրանք լցնելով բաց գոյնի սուաղով: Այս հատուածներում աւելացուել է նոր գունաշերտ որմնանկարի կեղտոտ հատուածների ընդօրինակումով (Նկար 25): Որոշ հատուածներում բացակայում են պիգմենտները եւ պահպանուել է միայն սուաղը յատկապէս գմբէթարդի հարաւային մասում եւ նրա կենտրոնական հատուածում, ուր գտնւում է Քրիստոսի գլուխը, որի դէմքը չի երեւում:

Ինչ վերաբերում է որմնանկարի կատարման վարպետութեան, օգտագործուած պիգմենտների եւ գեղարուեստական արտայատչական հնարքների կիրառմանը, ապա հարկ ենք համարում ընդգծել, որ գլխաւոր խորանի որմնանկարի պատկերագրութիւնը իրականացուել է երեք «հարքակ»ի սկզբունքով (դա քսուած սուաղի այն քանակութիւնն է, որը հնարաւոր է իրականացնել տախտակամածի մէկ՝ անշարժ դիրքի վրայ կանգնած): Սուաղի վերջին շերտը, որը պարզ երեւում է, քսուել է քառակերպի արծուի գլխի հատուածում մինչեւ որմնանկարի եզրի կարմիր գիծը: Երկրորդ շերտը սկիզբ է առնում խոյակների վերին մասից իսկ նրանից վերեւ՝ սուաղը հաւանականօրէն իրականացուել է մէկ ընդհանուր հատուածով (Նկար 26): Որմնանկարի սուաղման այս ընթացքը բացատրում է նաև ներքին երկու շերտերի համեմատաբար լաւ պահպանուածութիւնը վերեւի սուաղի շերտի նկատմամբ: Ի դէպ, որմնանկարի որակեալ իրականացումը, պահանջում է ներկի շերտի (հողային հիմքի ներկեր) հարիւր տոկոսանոց ներծծում խոնաւ սուաղի վրայ եւ սուաղի հետ չորացում մինչեւ որ ջրի յաւելեալ մասը գոլորշիանում է եկեղեցու ներսում: Շագանակագոյն պիգմենտի լաբորատոր հետազոտութիւնը վկայում է այն փաստը, որ այս պիգմենտը գտնուել է օքսալատ (օրգանական կազմ ունեցող տարրեր որպիսիք՝ կազէինայ, ձու եւ այլն որոնք ժամանակի ընթացքում

քայլայւում են) պարունակող կալցիումի կարբոնատի հիմքի վը-ըայ: Լաբորատոր ուսումնասիրութիւնները վաւերագրել են նաեւ, որ որմնանկարի վրայ գոյութիւն ունեն ներկի երկու շերտ: Ներ-կը սուաղին է քսուել շատ ջրիկ ու շատ արագ, տարբեր թա-փանցիկ չերտերով այնպէս, որ ջրաներկի տպաւորութիւն է ստացուել: Հնարաւոր է, որ գմբէթարդի վերին հատուածի սուաղը գրեթէ չորացած է եղել, երբ որմնանկարիչը սկսել է այն նկարել եւ գունային պիգմենտները չեն հասցրել լաւ ներծ-ծուել խոնաւ սուաղի մէջ չնայած բնական մասնիկների առկա-յութեանը: Այդ պատճառով, որմնանկարը այսօր պակաս մասեր ունի եւ ցաւօք այս իրավիճակը վերագրում է նաեւ Քրիստոսի դէմքի հատուածին: Որմնանկարի առաւել արտայայտիչ հա-տուածնները, որպիսիք են՝ քառակերպի աչքերը եւ հրեշտակնե-րի թեւերի աչքերը, Քրիստոսի գահը զարդարող մարդարիտնե-րը, իրականացուել են թանձր վրցնահարուածների սկզբունքով, հաստ ներկաշերտով եւ մեծ վարպետութեամբ, որը լաւ ընթերց-ւում է եկեղեցու յատակից նայելով (Նկար 27):



Նկար 28. Նախկինում
իրականացուած
վերանորոգումները:



Նկար 29. Նախկինում մատիտով
արուած վերանորոգումնան հատուածը
Ս. Սարգսի պատկերի վրայ:

Որմնանկարները վերանորոգուել են նախկինում, հաւանա-
բար՝ 1975ին եւ աւելի վաղ: Նկարչական մակերեսը մասամբ

մաքրուել է եւ իրականացուել են սուաղի բազմաթիւ լրացումներ մանաւանդ Քրիստոսի մարմնի հատուածում (Նկար 28): Նոր սուաղուած հատուածների հարթութիւնը անկանոն է ու անորակ, ալիքաձեւ, կարծես օգտագործած լինեն նեղ ծեփիչ մալայի փոխարչն: Վերանորոգուած սուաղի եզրամասերը կանոնաւոր չեն արուած սակայն, հիմքը որակեալ է: Կիրաւազային շաղախի բաղադրութիւնը շատ ամուր է: Նկարչական հատուածների վերականգնումը արուած է շատ մուգ տօներով հաւանաբար այն պատճառով, որ որմնանկարը նախքան վերականգնելը, լաւ մաքրուած չի եղել: Համեմատաբար մեծ մակերեսները իրականացուել են խառը եղանակով (մատիտ, հող եւ այլն) գծային կամ շղարշի ձեւով (Նկար 29): Սուաղի եզրամասերը ամրացուել են գրեթէ ամէնուր, սուաղի նոյն շաղախով, բացառութեամբ գմբէթարդի վերին մասը, ուր առկայ են սուաղի փոքր հատուածներ (գուցէ, ժամանակին, հնարաւոր չի եղել բարձրանալ մինչեւ վեր): Եզրամասերի սուաղը ներկուել է մուգ գոյնով արտայայտիչ չլինելու համար: Այս կերպ նրա գոյնը համեմատուել է տուֆի սեւացած քարերին: Այդ իսկ պատճառով, նախնական ուսումնասիրութեան ժամանակ, կարծել ենք, որ եզրամասերը ամրացուել են ցեմենտէ շաղախով: Սուաղի մէկ այլ նորոգութեան հետեւանքով, (գուցէ 15 տարի առաջ), օգտագործուել է միայն կիր առանց կապակցող սոսնձանիւթի, որը որմնանկարը մաքրելու ժամանակ գրեթէ ամբողջովին լուացուել է (Նկար 30):



Նկար 30. Նախմինում միայն կրով՝ առանց կապակցող նիւթի, արուած վերանորոգումները:

Լմբատավանքի որմնանկարների մաքրման, ամրացման ու մասնակի վերականգնման, ինչպէս նաև սուաղի պահպանուած հատուածների եզրերի մաքրման ու ամրացման, յատուկ շաղախի ներարկման ու կոնսերվատիւ վերանորոգման աշխատանքները իրականացուել են տեղում կատարուած հետազօտութիւնների արդիւնքից եւ միջամտութեան անհրաժեշտութիւնը վաւերագրելուց յետոյ: Բոլոր փուլերի անհրաժեշտ միջամտութիւնների նախագիծ առաջարկները ներկայացուել ու հաստատուել են ՀՀ Մշակոյթի նախարարութեան գիտամեթոդական խորհրդում, որից յետոյ 2013 թուականին իրականացուել են հետեւեալ աշխատանքները.

- որմնանկարի նկարազարդ ամբողջ մակերեսի մաքրում թորած ջրի ու բազիկայի թեւթեւ լուծոյթով,
- գմբէթարդի մրից կեղտոտուած տուֆի պատի մակերեսի լուացման հետեւանքով որմնանկարի վրայ ծորացող ջրային հոսքերից պաշտպանելու նպատակով, որմնանկարի նկարչական թաղանթի ամրացում ու ամրապնդում Polaroid B72 եւ ացետոնի թոյլ լուծոյթով,
- ներարկման միջողով պոկուած սուաղի պատին ամրացում PLM della CTS di Altavilla Vicentina միներալային խառնուրդի շաղախով,
- որմնանկարի սուաղի եզրերի ամրացում եւ մուգ գոյնի ներկի մաքրում, սուաղի եզրերի հատուածներում միայն կրով՝ առանց սոսնձամասի սուաղի մաքրում, հեռացում: Սուաղի նոր եզրերը իրականացուել են մանրահատիկ աւազի ու կրի շաղախի մածուկով, լաւ հարթ ու բարակ,
- տուֆէ որմնաքարերի ու շարուածքի շովերի առանց շաղախի հատուածների մաքրում փոփոխական արագութեան էլեկտրական շարժիչին ամրացուած նայլոնի յատուկ խողանակով (ցածր արագութեամբ) եւ ջրով: Նախնական մաքրում այն հատուածներում, ուր, պատի մակերեսը շատ կեղտոտ էր ու ծածկուած էր պարաֆինի հաստ շերտով,
- նկարազարդ բոլոր հարթութիւնների Polaroid B72 ոեզինէքսուկից մաքրում ացետոնի լուծոյթով ներծծուած բամբակէ թրջոցներով,
- ընտրուած հատուածի վերականգնում այդ թւում՝ նախքին սուաղի, ներկի շերտի ու նկարչական վերակառուցման հատուածների հետազօտում ու նորովի վերականգնում:

Հնաբուժած հատուածի ցուցադրական վերականգնումը իրականացրուել է այն նպատակով, որպէսզի ուսումնասիրուեն ու քննարկուեն 1975 (?) թուականին արուած վերականգնման ընթացքում տեղի ունեցած բացթողումները։ Փոքր հատուածների քիչ դէպի դուրս արուած սուաղները թողնուել են անփոփոխ։ Դրանք զգուշութեամբ հարթեցրուել են ապակեթղթով։ Այդ եղանակով հեռացրուել է նաեւ դրանց վրայ արուած նոր ներկի մուգ շերտը։ Շատ մանրահատիկ սուաղով լրացրուել են ծեփի անցքերը ու քսուել է հողի հիմք ունեցող նոր ներկի բարակ շերտ՝ ամբողջացնելով նըկարչական բնօրինակ յօրինուածքը (Նկար 31)։ Որմնանկարների նըկարչական մակերեսի վրայ իրականացրուած միջամբտութիւնները մանրամասն նկարագրելու նպատակով, իրականացրուել է գլխաւոր խորանի կոնաձեւ հարթութեան փուլածք, որը, պայմանականօրէն բաժանուել է հինգ ուղղանիւն հատուածների իւրաքանչիւրը՝ 1x1,5 մետր չափի (Նկար 32)։ Նոյն սկզբունքով առանձնացրուել է գմբէթարդի հատուածը՝ գահին նստած քրիստոսի պատկերով, ինչպէս նաեւ հիւսիսակողմ խորանի Ա. Գեւորգի պատկերի հատուածը։



Նկար 31. Կոնսերվատիվ վերականգնման մանրամասն Ա. Գեւորգ գօրավար պատկերագրութիւնը վաւերագրող որմնանկարի վրայ։



Նկար 32. Գլխաւոր խորանի որմնանկարի փուլածքը։

Գլխաւոր խորանի գմբէթարդի ինչպէս նաեւ, հիւսիսային ու հարաւային խորանների պատերին առկայ որմնանկարի հիանալի տեսապատկերագրութիւններից բացի, Լմբատավանքի Ս. Ստեփանոս նախավկայ եկեղեցու ներսում պահպանուել են կառուցման շրջանին ժամանակակից հարթագանդակներ, գեղարուեստական մեծ արժէք ներկայացնող զարդայօրինուածքներ, որոնց թւում՝ հարաւային եւ հիւսիսային խորանների պատերին փորագրուած հաւասարաթեւ, շրջանագծի մէջ ամփոփուած խաչերը: Բացառիկ գեղեցկութիւն ու յօրինուածքային անկրկնելի նրբութեամբ է օժտուած արեւմտեան մուտքի միակ կամարակապ խորանի վերին հատուածի եւ եկեղեցու արեւելք-արեւմուտք առանցով գետեղուած բարձրագանդակ խաչը, որը նման է տուեալ դարաշրջանում օգտագործուած եւ տարբեր եկեղեցիներում առկայ զարդախաչերին, (Զարթառ, Զովունի Ս. Վարդան, Փարպի Ծիրանաւոր, Երերոյք):



Նկար 33. Եկեղեցու արեւմտեան ներսի պատի փորագիր խաչը մաքրելուց առաջ:



Նկար 34. Խաչի ներսի գունային սուաղի մանրամասն:

Խաչի մաքրման աշխատանքներից առաջ կատարուած լուսանկարներից պարզ երեւում է թէ ի՞նչ պայմաններում է այն հասել մեզ (Նկար 33): Տարիների ընթացքում, երբ եկեղեցին դուռ չի ունեցել, «հաւատացեալները» հազարաւոր մոմեր են ամրացրել խաչի հէնց տակը, որոնց այրուելու հետեւանքով խաչի ամբողջ մակերեսը պատուել է մրի ու պարաֆինի հաստ, ամուր պարող մակերեսը պատուել է մրի ու պարաֆինի հաստ, ամուր շերտով: Մաքրելու զանազան տարբերակները վերլուծելով, որոշում ընդունուեց այն իրականացնել խառը եղանակով օգտագործելով տարբեր չափի մետաղական բրիչներ, բարակ հատիկաչածներ, փի ապակէ թուղթ, ացետոնով ներծծուած բամբակէ թրջոցներ, տաք օդի հոսք (Փեն): Մաքրման հերթականութիւնը հետեւեալն տաք օդի հոսք (Փեն):

է. մետաղական բրիչ, ապակէ թուղթ, ֆեն, ացետոնի բամբակեայ թրջոց, բրիչ, ացետոնէ բամբակեայ թրջոց։ Երբ յաջողուեց վերացնել պարագինի հաստ շերտը եւ հասնել տուֆի քարի բնական մակերեսին, ի յայտ եկաւ հետաքրքիր մի իրողութիւն։ Ժամանակի ընթացքում, խաչը «գեղեցկացնելու» նպատակով, նրա փորագրուած խորշերի մէջ, սուաղ են արել ու սուաղի վրայ, որմնանկարին յատուկ եղանակով, կանաչ՝ ծովագոյն ներկել (Նկար 34)։ Այս փաստագրումը վաւերագրելուց յետոյ, յաջողուեց այն պահպանել ու ի յայտ դարձնել։ Որմնագիր խաչը մաքրուեց ճիշտ աջ՝ ուղղահայեաց կէսի չափով ի յայտ դարձնելով նրա նախնական ու մաքրումից յետոյ իրավիճակը (Նկար 35)։ Խաչի, ինչպէս նաեւ եկեղեցու ներսի պատերի ու զարդանախշերի ամբողջական մաքրումը սպասում է իր հերթին։



Նկար 35. Խաչի կէսը մաքրելուց յետոյ։



Նկար 36. Փորագրուած խաչի ժարի մանրամասն։

Խաչի մաքրման աշխատանքների ընթացքում, կատարուել է նաեւ նրա յօրինուածքի, ձեւի, երկրաչափութեան ուսումնասիրութիւն։ Հետաքրքիր է նկատել, որ որմնագիր խաչը փորագրուել է մի կտոր անկիւնային քարի վրայ, որի չափերն են 98x55սմ, խաչի հորիզոնական շառաւիղը՝ 59սմ։ Քանզի, խաչի տրամագիծը աւելի մեծ է քան այն քարի բարձրութիւնը, որի վրայ փարագրուել է, եկանք այն եղրակացութեան, որ այս խաչակիր մեծածաւալ քարը է։ Դարից առաջ է իրականացուել եւ օգտագործուել է եկեղեցու կառուցման ժամանակ ագուցելով նրան պատի մէջ։ Քարը վերեւից ու ներքեւց քիչ տաշուել է շարքի մէջ ճիշտ տեղադրելու նպատակով (Նկար 36)։ Միւս հետաքրքիր դիտարկումը այն է, որ քարտաշ վարպետը քարի վրայ

զարդօղակը կարգինահարելուց յետոյ, (օղակի բարձրութիւնը՝ 7սմ), սկսել է փորագրել մէկը միւսին յաջորդող եռանկիւնի յօրինուածքները եւ, երբ, զարդանախշերի շարանը ամփոփուել է ու օղակը փակուել, նկատել է չափի տարբերութիւն: Անհոգ մնալով ու վարպետութեամբ, օղակը «փակելու» համար օգտագործել է ուրիշ մի յօրինուածք, որը բանալու դեր է կատարում (Նկար 37):



Նկար 37. Խաչի փորագրուած օղակի բանալին:

2014 թուականին Լմբատավանքի եկեղեցում որմնանկարի մաքրման, ամրացման եւ կոնսերվատիւ վերականգնման աշխատանքների ընթացքում, նպատակ ունէինք նաեւ մաքրել ու ամրակայել գլխաւոր խորանի որմնամոյթերի սոււաղը յոյս ունենալով յայտնաբերել որմնանկարի մնացորդները խոյակների հատուածներում: Կարեւոր է նշել այն փաստը, որ հիւսիսային կողմի խոյակների որմնանկարները գրեթէ չեն պահպանուել: Ի յայտ եկաւ միայն մի փոքր հատուած, որը դժբախտաբար ոչ մի հնարաւորութիւն չտուեց վերականգնել կամ պատկերացում կազմել նրա յօրինուածքի ու նկարչական արժէքի մասին: Հարաւային խոյակների մաքրման ընթացքում մենք ի յայտ բերեցինք չքնաղ նկարուածքով ու շատ լաւ պահպանուած, ի. դարի խոյակների որմնանկարները: Զնայած այն հանգամանքի, որ այս հատուածը նախատեսուած աշխատանքներից դուրս էր, սակայն հասկանալով մեծ նշանակութիւնը ու արժէքը, դրանք խնամքով մաքրուեցին, ամրացուեցին ու ենթարկուեցին կոնսերվատիւ վերականգնման (Նկար 38, 39): Մեր կարծիքով, խոյակների նկարչական թեման վերագիրում է Ե.-ի. դարերում Հայաստանում տարածուած արմաւենու տերեւների օգտագործման աւանդոյթին: Նմանատիպ խոյակների գեղարուեստական մշակումներ քարի վրայ տաշուած ու փորագրուած հանդիպում ենք, Զոււարթնոցում, Դուինում, Թանահատուած: Սակայն մեզ յայտնի չեն տուեալ դարաշրջանում կատարուած ու մեզ հասած նման յօրինուածքի որմնանկարի այլ տարբերակները: Այս իմաստով, Լմբատավանքի Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցին եղակի երեւոյթ է նոյնպէս: Խոյակների նկարչական հմտութիւնը, գծերի վստահ ընթացքը, գունային երանգների ընտրութիւնը, ոճի յստակ արտայայտչականութիւնը, խորհրդանշանային արժէքը, անկասկած վերին դասի նկարչական դպրոցի ու վարպետութեան արդիւնք են:



Նկար 38. Հարաւային որմնասիւների խոյակները պատկերագրող որմնանկարները մաքրելուց առաջ:



Նկար 39. Հարաւային որմնասիւների խոյակները պատկերագրող որմնանկարները մաքրելուց յետոյ:

Հիմնական աշխատանքներից դուրս, Լմբատավանքի եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Լեւոն քահանայ Յովհաննիսեանի խընդրանքով, իրականացուել է գլխաւոր խորանի որմնանկարի տակ գտնուող սպիտակ սուաղի մի հատուածի խազագրերի, խազանկարների, փորագրութիւնների փորձնական մաքրում ու վերականգնում: Տարիների ընթացքում, երբ եկեղեցին գործող չի ե-

ղել եւ դուռ լուսամուտից զուրկ էր, տխուր աւանդութեան համաձայն, այցելուները եկեղեցու պատերի սուլաղների վրայ արձանագրութիւններ, անուններ, արտայայտութիւններ ու նկարներ են խազագրել (Նկար 41):



Նշեկական ճարտարապետության խոյակների նմուշներ. 1. Զբաղեցներ, 2. Դվին, 3. Արգել, 4. Շաղպատ (Խակելի տուն, Փայտ), 5. Թամահատ, 6. Զվարդաց, 7, 8. Երեքուբ

Նկար 40. Նոյն ժամանակաշրջանին վերաբրուող նմանատիպ նրմնադիր խոյակները Զուարքնոցում, Դուինում, Թամահատում։

Որմնանկարներն ու պատերը մաքրելուց ու վերականգնելուց յետոյ, անհրաժեշտութիւն առաջացաւ դրանք եւս մաքրելու համարաւորին ջնջել։ Վանդալների թողած հետքերը մաքրելու համար, կատարուեցին հետեւեալ միջամտութիւնները փորձնական մի հատուածի վրայ, որը գտնուում է գլխաւոր խորանի ձախ գողաւորութեան վրայ։ Սուաղի մակերեսը մաքրուեց չոր, փափուկ վրձնով, որից յետոյ, մակերեսին քսուեց Paraloid B72 պաշտպանիչ շերտ։ Այն չորանալուց յետոյ, լանցեատով զգուշուալ պաշտպանիչ շերտ։ Այն չորանալուց յետոյ, լանցեատով զգուշուակով։ Այնուհետեւ, սպունգով


խոնաւացուեց մակերեսը եւ խորը խազերի վրայ քսուեց խոշորահատիկ աւազային-կրային սուաղի մածուկ, որը չորանալուց յետոյ մաքրուեց մանրահատիկ ապակեթղթով։ Որից յետոյ, բարակ խազէերի մէջ քսուեց մանրահատիկ աւազային-կրային մածուկ, որը չորանալուց յետոյ մաքրուեց մանրահատիկ ապակեթղթով։ Աշխատանքի վերջում, նոր ու հին սպիտակ սուաղները քօղարկելու համար, օգտագործուեցին գունային շղարշի տարբեր շերտեր, որոնք անցկացուեցին վրձնով, նոր հատուածների վրայ (Ակ 42)։ Արդիւնքը գոհացուցիչ կարելի է համարել եւ շարունակել սպիտակ սուաղի ամբողջ մակերեսի վրայ։



Նկար 41. Եկեղեցու խորանի սուաղի վրայի խազագրերը վերանորոգումից առաջ։



Նկար 42. Եկեղեցու խորանի սուաղի վրայի խազագրերը վերանորոգումից յետոյ։



Նկար 43. Նախմինում կատարուած սուաղի անորակ վերանորոգումները ս. Սարգսի որմնանկարի վրայ։



Նկար 44. Սուաղի նոր հատուածների կոնսերվատիւ վերականգնումը։




Նկար 45. Ս. Գեորգ զօրապվարը պատկերող որմնանկարի կոնսերվատի վերականգնման մանրամասն:

Նկար 46. Խաչափայտի խաչի կոնսերվատի վերականգնման մանրամասն

Նախատեսուած աշխատանքների այս փուլի մաս էր կազմում նաև Ս. Գեւորգը պատկերող որմնանկարի կոնսերվատիւ վերականգնման միջամտութիւնը այնպէս, ինչպէս ներկայացուած է եղել 2013ի դեկտեմբեր ամսուայ Լմբատավանքի Ս. Ստեփանոս Նախավկայ եկեղեցու որմնանկարների եւ պատերի մաքրման, ամրացման ու կոնսերվատիւ վերականգնման աշխատանքների առաջին փուլի հաջուետուութիւն եւ երկրորդ փուլի նախագիծ-առաջարկում։ Աշխատանքները սկսուեցին մեխանիկական եղանակով (բրիչ, փոքր մուրճ, լանցետ) որմնանկարի մակերեսին առկայ եւ խորհրդային ժամանակաշրջանում սուաղի փոքր հատուածների քանդում հեռացումով, որոնք ընդհանուր մակերեսի հետ նոյն հարթութեան մէջ չէին (Նկար 43)։ Սուաղի համեմատաբար մէծ մակերեսի հեռացումը բացայայտեց նախապատրաստական շերտի ու պլիմերի բարակ վրձնահատուածի առկայութիւնը, որը աւելի ամուր է դարձրել քարի ու սուաղի կապակցութիւնը։ Լրացուցիչ լաբորատոր անալիզները հնարաւոր կը դարձնեն պարզել, եթէ այս միջամտութիւնը վաթսունակաան թուականներին է իրականացուել, թէ՝ արուել է որմնանկարի իրականացման ժամանակ։

Սուաղի նոր հատուածները քսուել աւազի ու կրի շաղախի երկու շերտով: Առաջինը՝ աւազի միջին խոշորութեան հատիկաշափերով (տրամագիծը՝ 2-3 մմ), իսկ երկրորդը՝ աւազի շատ բարակ հատիկաշափերով (Նկար 44): Նոր սուաղը քսուել փոքր ծեփիչի միջոցով, որի անկիւնները լաւ յղկուած են եղել իսկ մետաղական մասը՝ շատ որակով այնպէս, որպէսզի սուաղի նոր մասը գըեթէ չտարբերուի հնից: Գունաշերտի լրացումները իրականացուել են բնական հողերից բաղկացած շղարշի թաղանթներից, որոնք դրուել են կէտային վիերացիոն եղանակով, մի քանի շերտով այնպէս, որպէսզի գունային նոր երանգը հաւասարուի պահպանուած հատուածներին ամբողջացնելով պատկերը: Վերականգնուած գունային նոր հատուածները ամէն դէպքում տարբերում են բնօրինակից: Այս եղանակով մշակուել են՝ կարմիր վերնազգեստը, կանաչ-կապոյտ շապիկը, սրբի վիզը, ձիու վիզն ու բաշը (Նկար 45): Ա. Գեւորգի աջ ձռքում պահած եւ բութ մատով դէպի Քրիստոս ուղղուած ձեռքում պահած խաչափայտի ծայրին ամրացուած խաչը, որ պահպանուել էր միայն նրա ստորին հատուածով, ամբողջովին վերականգնուել է (Նկար 46): Կոնսերվատիւ վերականգնման աշխատանքների վերջում, որմնանկարը ամրացուել է Paraloid B72 եւ ացետոնի համադրութեան պաշտպանիչ լուծոյթով:



Նկար 47. Ա. Գեւորգ գօրակարը պատկերագրող որմնանկարի վերին մասում պահպանուած որմնագիր արձանագրութիւնը:



Նկար 48. Որմնագիր արձանագրութեան մանրամասն
մաքրելուց առաջ:

Ս. Գեւորգը պատկերագրող որմնանկարի շրջակայ տարածքը մաքրելու ընթացքում, ի յայտ եկաւ սրբապատկերի աջ վերին հատուածում սոււղի վրայ՝ որմնագիր հայատառ արձանագրութեան տեքստ, որը բաղկացած է 22 տողից: Արձանագրութիւնը գրուած լինելով որմնանկարի նոյն սոււղի վրայ, այն լաւ չի պահպանուել եւ ցաւօք ոչ մի տող ամբողջական չէ (Նկար 47): Հետաքրքիրը այն է, որ որմնագիրը տեքստը սկեսել է զրել ընտրելով տառերի բաւական մեծ չափ՝ հսմ բարձրութիւն եւ հինգերորդ տողից յետոյ, երբ անդրադարձել են, որ ընտրուած տեղը եւ տառերի չափը չի տեղաւորում պատի տուեալ հատուածում, հետզհետէ, տառերի բարձրութիւնը պակասեցրել են Յ եւ 1,5 սմ-ի: Մէկ ուրիշ հետաքրքիր առանձնայատկութիւն տեսնում ենք 16-րդ եւ 17-րդ տողերի հեռաւորութեան մէջ, որտեղով անցնում է Ս. Գեւորգի որմնանկարի վերին կարմիր շրջանգակի հաստութիւնը եւ մնում է զրանից վերեւ ու ներքեւ խախտելով տողերի համեմատաբար կանոնաւոր հեռաւորութիւնը: Այս փաստը վկայում է այն մասին, որ որմնագրութիւնը

ժամանակակից է որմնանկարին: Օգտագործուած տառատեսակը շատ գեղեցիկ է, գրուած է խնամքով ու առանց տողատակ գծերի: Սա է հաւանական պատճառը, որ տեքստի տողերը ձախից աջ իջնում են ներքեւ ուստի տառագիրը աջիկ է եղել: Տեքստը անշուշտ գրաբարով է: Քերականական դարձուածքները, յապաւումները, տառերն իրար հետ համադրելու սկզբունքը եւ գեղարուեստական ճաշակն ու տառերի տեսակը ուսումնասիրելուց յետոյ, յուսանք պարզ կը դառնայ նրա բովանդակութիւնը ու ժամանակաշրջանը: Հակուած ենք ենթադրել, որ այն արուած է որմնանկարը նկարելու հետ միաժամանակ եւ յոյսով ենք նաեւ, որ կը պարզուի որմնանկարի հեղինակի անունը: Ներկայ իրավիճակում արձանագրութեան տեքստը վերծանւում է Հնագիտութեան ինստիտուտի մասնագէտների կողմից:



Նկար 49. Ս. Սարգիս գօրավարը պատկերագրող որմնանկարի մաքրման աշխատանքները:



Նկար 50. Ս. Սարգիս գօրավարի որմնանկարի նախկինում արուած վերանորոգումները:



Նկար 51. Ս. Սարգիս գօրավարը պատկերագրող որմնանկարի մաքրման:



Նկար 52. Հին անորակ սուաղի հեռացումը:

2014 թուականին իրականացուած վերջին միջամտութիւնը, վերագրւում է Ս. Սարգսին պատկերող որմնանկարի մաքրման եւ մասնակի կոնսերվատիւ վերականգնման աշխատանքներին: Այս նպատակով որմնանկարը մաքրուել է մոմավառութիւնից առաջացած իւղային նստուածքներից նախ ացետոնով, որից յետոյ օգտագործուել է թորած ջուր եւ բազիկի թոյլ լուծոյթ (Նկար 49): Ս. Սարգսի որմնանկարը մաքրելուց յետոյ անմիջապէս ի յայտ եկաւ այն փաստը, որ որմնապատկերի դէմքի եւ ձեռքի բնօրինակ հատուածի մէծ մասը ծածկուած է նոր սուադով, որի վրայ արուել է քսաներորդ դարի վաթսունական թուականներին իրականացուած վերականգնման փորձ (Նկար 50): Այս հատուածների սուադը ի տարբերութիւն մնացած մասերի, որոնց թւում՝ Ս. Սարգսի ու գլխաւոր խորանի որմնանկարները, դուրս է ցցւում պատի սուադի մնացեալ հատուածներից ուստի՝ հնարաւոր է, որ այն ծածկում է դրա տակ գտնուած բնօրինակ որմնանկարը (Նկար 51): Մեխանիկական եղանակով (սրածայր ասեղներ, փոքր մուրճ, լանցետ) հեռացուել են փոքր չափի այն սուադները (Նկար 52), որոնք բնօրինակ սուասի հետ միեւնոյն հարթութեան մէջ չէին: Բաց է թողնուել սըբապատկերի դէմքի ամբողջական հատուածը:




Նկար 53. Տասնինգ կոպեկանոց մետաղադրամի յայտնաբերումը:

Ս. Սարգսի ու գլխաւոր խորանի Քրիստոսի դէմքերը կը մշակուեն 2015 թուականին ծրագրուած միջամտութիւնների ըն-

թացքում հայ վերականգնող մասնագէտների համագործակցութեամբ: Համեմատաբար նոր սուաղի հեռացումը ի յայտ բերեց, պատի վրայ արուած նախապատրաստական շերտի առկայութիւնը, որը նման է վրձնով անցկացուած պրիմերին: Վերջինս հնարաւորութիւն է տալիս աւելի լաւ կապակցել սուաղը տուֆէ քարերին: Հեռացուած սուաղի լաբորատոր անալիզները հնարաւորութիւն կը տան բացայայտել այս սուաղի առանձնայատկութիւնները: Ս. Սարգսի որմնանկարի ձիու ձախ ոտքի վրայի եւ խորհրդային ժամանակաշրջանում նոր սուաղի հեռացման ժամանակ, ի յայտ եկաւ 15 կոպեկանոց մետաղադրամ, որի ետին մասում դաճուած է 1961 թիւ (Նկար 53): Սուաղի մէջ թողնուած այս մետաղադրամի առկայութիւնը վկայում է այն մասին, որ այդ թուականին կամ դրանից յետոյ կատարուել է վերականգնման փորձ: Փաստ, որը մեր կողմից նախկինում արդէն ակնարկուել էր:

Կիրաւագային բաղադրութեան նոր սուաղի շերտը անց է կացուել երկու փուլով: Առաջինը՝ միջին խոշորահատիկ աւազի ու կրի սուաղով եւ երկրորդը՝ շատ մանր: Սուաղը քսուել փոքր մետաղական ծեփիչով այնպէս, որպէսզի նոր սուաղի մակերեսը կատարեալ հարթ լինի եւ հնին հաւասար: Գունային նոր շերտի իրականացումը արուել է բնական հողի պիգմենտներով կէտային վիբրացիայի տեխնիկայով իրար վրայ դնելով տարբեր շերտեր այնպէս, որպէսզի վերջնական երանգը աւելի թոյլ լինի բնօրինակից եւ լրացնի պատկերի նկարչական յօրինուածքը: Սա մասնաւորապէս վերաբերում է որմնանկարի ձիու գլխի ու վզի հատուածներին (Նկար 54):



Նկար 54. Ս. Սարգս որմնանկարի մասնակի կոնսերվատիւ վերականգնումը: Կերպութեամբ առաջարկած է առաջարկած վերաբերութիւնը նկարչական յօրինուածքը: Սա մասնաւորապէս վերաբերում է որմնանկարի ձիու գլխի հատուածներին (Նկար 54):

Résumé

CONSERVATION DES PEINTURES MURALES DANS L'ÉGLISE SAINT-ETIENNE DA LMBATAVANK: NETTOYAGE DES PEINTURES ET DES MURS SANS ENDUITS

CHRISTINE LAMOUREUX
ARA ZARIAN

Les travaux de restauration sur les fresques du VII siècle dans l'abside de l'église Saint-Etienne à Lmbatavank durant la fin de l'été et le début de l'automne 2013 ont fait l'objet d'un long travail de préparation tant pour sélectionner le choix du chantier que pour rassembler les informations, les analyses scientifiques et l'élaboration d'un projet afin d'obtenir les autorisations nécessaires pour effectuer la première phase des travaux.

Une première reconnaissance des lieux a été effectuée durant l'été 2012 par l'arch. Arà Zarian avec Alik Honhannisian et un échantillon d'enduit a été prélevé et analysé (CSG Palladio-Vicenza).

Un bref séjour en juillet 2013 a permis (grâce à l'autorisation du ministère de la culture arménienne) de faire des essais de nettoyage des peintures et le prélèvement d'un échantillon d'enduit peint fait analysé de retour en Italie (CSG Palladio-Vicenza).

Le projet pour la restauration des fresques a pu ainsi être réalisé et approuvé.

Cette première phase a consenti de nettoyer la peinture murale dans de bonnes conditions (un solide échafaudage bien réalisé et garanti par la générosité de Aghasi Aghadjanian qui avait depuis quelque temps déjà fait en sorte que l'électricité soit présente).

Il a donc été possible de prendre connaissance et de vérifier les interventions de restauration précédentes, celles-ci ont été documentées et présentées dans la relation finale de l'intervention et dans le projet pour son complètement.

Durant les travaux, comme concordé à Erevan, nous avons eu la visite du restaurateur Areg Petrossian pour confronter et concorder l'intervention.

L'intervention de septembre 2013 s'est donc limitée au nettoyage des peintures, à leur fixation à base de résine Paraloid B72 en forte dilution, à leur adhésion au support en pierre par injection de produits préparés à base de mélanges minéraux.